

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՇՏՈՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	Էլեկտրասարքավորումների գծով ինժեներ
ՎԵՐԱԴԱՍԻ ՊԱՇՏՈՆԸ	Էլեկտրասարքավորումների գծով գլխավոր ինժեներ
ԺԱՄԿԵՏԸ	Լրիվ դրույք
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐԸ	Ամուլսար, Վայոց ձոր, ՀՀ
ԱՍՏԻՃԱՆԸ	

ԱՍՈՒԼՍԱՐԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔ

Ամուլսարի ոսկու կույտային տարրավազման ծրագիրն իրականացվում է Վայոց ձորի մարզում: Հանքը շահագործվում է Լիդիան Արմենիա ընկերության կողմից: Այժմ իրականացվում է շինարարության փուլը, որին կհաջորդի շահագործման փուլը՝ 2018թ. երրորդ եռամսյակում:

1875տ/ժ հզորությամբ ոսկու մշակման գործարանը բաղկացած է մանրացման և տեսակավորման հանգույցներից, 5կմ երկարությամբ վերգետնյա փոխակրիչից, բեռնատարների բեռնաթափման համակարգից, ինչպես նաև ոսկու կույտային տարրավազման համակարգից և ԱԴՎ կայանից:

ՊԱՇՏՈՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Էլեկտրասարքավորումների գծով ինժեները հաշվետու է և տեխնիկական աջակցություն է ցուցաբերում Էլեկտրասարքավորումների գծով գլխավոր ինժեներին սարքերի և էլեկտրասարքավորումների տեխսպասարկման գործում:

Տվյալ պաշտոնը ենթադրում է տեխնիկական մասնագիտության առկայություն՝ սարքավորումների անխափան շահագործման, մշակման գործընթացի արդյունավետության և արտադրողականության մշտապես բարելավման նպատակով:

Էլեկտրասարքավորումների գծով ինժեների պարտականությունների մեջ է մտնում սարքերի, էլեկտրամոնտաժման աշխատանքների, պլանավորման բաժնի հետ աշխատանքների գերազանց համակարգումը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նախաձեռնել անվտանգ աշխատանքների իրականացում, մասնավորապես բարձր լարման հոսանքի անջատիչների ճշգրիտ կիրառում:

Որպես տեղամասում տեխնիկական մասնագետ, պատասխանատու է հոսանքի բախշման, այդ թվում՝ 110կՎ/35կՎ ենթակայանի, 35կՎ բաշխիչ գծի, 35/0.4կՎ և 35/6 բաշխիչ տրանսֆորմատորների, ինչպես նաև 35կՎ և 6կՎ փոխարկիչների շահագործման համար: Պարտավոր է կառավարել տեղամասում առկա երկու շարժաբեր կայանքները (ABB multidrive units), որոնցից մեկը հոսանք է արտադրում 5,4կմ երկարությամբ վերգետնյա փոխակրիչից:

Բոլոր սարքավորումների վերաբերյալ կիրականացվի համապատասխան ուսուցում:

Նախաձեռնել վերամշակման գործարանի բարելավման ծրագրեր, այդ թվում ձևափոխումների կամ բարելավումների տեսքով, ինչպես նաև մշակել էլեկտրականության վերականգման ստանդարտ տեխնիկական մասնագրեր տեղամասից դուրս իրականացվող աշխատանքների համար:

Հանդիսանում է կոնտակտային անձ էլեկտրականության հետ կապված բոլոր տեսակի հարցերում, այդ թվում հոսանքի պլանային և ոչ-պլանային անջատումների դեպքում, ինչպես նաև պարտավոր է մանրամասն հաշվետվություն պատրաստել նման դեպքերում առաջացող արտադրական վնասի վերաբերյալ:

Մշտապես թարմացնել էլեկտրականությանը վերաբերող բոլոր փաստաթղթերը:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ

Պահանջվող փորձ և որակավորում

- Էլեկտրական սարքավորումների գծով ինժեների կրթություն կամ որակավորում հարակից ոլորտներում
- Առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ էլեկտրասարքավորումների ինժեների պաշտոնում հանքարդյունահանման կամ արդյունաբերական այլ ոլորտներում
- Համակարգչային բարձր գիտելիքներ, այդ թվում վիճակագրության ոլորտում
- Հայերեն և ռուսերեն լեզուների վարժ տիրապետում, անգլերեն լեզվի աշխատանքային մակարդակով տիրապետում
- Աջակցություն ցուցաբերելու պատրաստակամություն, անկողնակալ վերաբերմունք

Հետևյալ համակարգերի հետ աշխատանքային փորձը կդիտվի որպես առավելություն

- Բարձր լարման հոսանքի շարժիչներ, բարձր լարման հոսանքի անջատիչներ, բարձր լարման հոսանքի բաշխում
- Չափիչ սարքեր, տարբեր տեսակի շարժաբեռներ, հաղորդիչ համակարգեր (Profibus), ծրագրով կառավարվող էլեկտրական ապարատներ (PLC)
- Նախագծման կամ ինժեներական ոլորտում աշխատանքի փորձ
- Կառավարման համակարգերի համակարգչային սպասարկման փորձը կդիտվի որպես առավելություն
- Autocad ծրագրի ընդհանուր գիտելիքներ
- Սարքավորումների (շարժիչներ, մալուխների, տրանսֆորմատորների) տեխնիկական վիճակի վերահսկման դասընթացների վկայական կամ որակավորում տվյալ ոլորտում

ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հետաքրքրված բոլոր թեկնածուները կարող են իրենց ինքնակենսագրությունն (ռեզյումեն) ուղարկել հետևյալ հասցեով՝ hr@lydianinternational.co.ukՆամակի 'Subject' տողում անհրաժեշտ է նշել պաշտոնը: Միայն վերջին փուլ անցած (կարճ ցուցակում ընդգրկված) թեկնածուները կհրավիրվեն հարցազրույցի:

ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԿՁԲՆԱԺԱՄԿԵՏ

Հունվարի 08, 2018

ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐՁՆԱԺԱՄԿԵՏ

Հունվարի 22, 2018